

Յուրի Հովհաննիսյան. Խոհական զգացմունքի վարպետ կերպավորողը



Տարբեր են լինում արվեստագետներն իրենց անհատական ցուցահանդեսների կազմակերպման հարցում: Կան ստեղծագործողներ, ովքեր 5-6 աշխատանքից հետո պարտադիր ցուցադրում են դրանք և արդյունքում, ասենք, 25-ամյա նկարիչը կամ քանդակագործը կարող է հրավիրել իր,

ասենք, քսանհինգերորդ անհատականին:

Յուրի Հովհաննիսյանը դասվում է այն արվեստագետների շարքին, ովքեր ստեղծագործական հասունացման բարձրակետին են կազմակերպում իրենց անդրանիկ անհատական ցուցահանդեսը՝ կարծես ասելով. «Սա՛ է իմ աշխարհը, տեսեք ու գնահատեք»: Նրա յուրաքանչյուր գործում առկա է իրավիճակը, այդ պահին նրան համակած խոհն ու զգացմունքը: Այս երկուսի ներդաշն համադրությամբ են առանձնանում քանդակագործի թե՛ վաղ, թե՛ ուշ շրջանի ստեղծագործությունները: Նրա մոտ զգացմունքը խոհական է, խոհը՝ զգացական: Դրանք գիրկընդխառն են հանդես գալիս նրա գրեթե բոլոր ստեղծագործություններում, որոնք ժանրային լայն ընդգրկում ունեն՝ դիմաքանդակ, կոմպոզիցիա, մոնումենտալ-դեկորատիվ աշխատանքներ:

Յուրի Հովհաննիսյանը ծնվել է Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Շոշ գյուղում: Մասնագիտական կրթությունը ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում (ավարտել է 1974թ.)՝ ուսանելով հայտնի քանդակագործ-մանկավարժներ Թերեզա Միրզոյանի և Սուրեն Նազարյանի արվեստանոցներում: «Մոնումենտալ-դեկորատիվ քանդակը միշտ գրավել է ինձ», - խոստովանում է նա և առաջինը մտաբերում Չարենցավանի հաստոցաշինական գործարանի դահլիճը զարդարող 12 մետրանոց «Վերածնունդ»ը: Վերջինս, ճիշտ է, ունի կոմպոզիցիոն կենտրոն՝ Վահագնի ծնունդը, սակայն աշխատանքի յուրաքանչյուր հատված իր մեջ խտացնում է հայոց պատմության մի առանձին դրվագ:

Մոնումենտալ շեշտվածություն ունեն նաև Աշան գյուղի գոհվածների հիշատակին նվիրված բազալտակոտ կամարը, Արտաշատում տեղադրված «Պեզասներ» բարձրաքանդակը և Երևանի «Սեբաստիա» մանկապարտեզի ճակատը հարստացնող «Անդրանիկ և Սեբաստացի Մուրադ» դեկորատիվ քանդակը: «Արցախ.



Պայքար» կոչվող աշխատանքը, որը ներկա ցուցահանդեսի կենտրոնական նմուշներից է, կառուցված է դեպի վեր պարզաձև և խրոխտ արծիվներ հիշեցնող 7 ջլապինդ բռունցքների համադրությամբ: Դրանք մարմնավորում են Լեոնային Ղարաբաղի հինգ շրջանները, Հայաստանն ու սփյուռքը: Այս քանդակը ոչ մի կերպ չի տեղավորվում փոքր չափերի տրամաբանության մեջ և ակամա ընդարձակ տարածք է «պահանջում»:

Ի դեպ, արվեստագետը եղել է արցախյան պայքարի առաջամարտիկներից մեկը, երկար տարիներ ղեկավարել «Արցախ» հայրենակցական միության աշխատանքները: Ակնհայտ է, որ քանդակագործն ունի ընդգծված ռոմանտիկ ոգի, դրա էլեմենտներն արտահայտելու սուր աչք և զգացական ակնթարթներն ընդհանրացված կերպով նյութականացնելու անուրանալի կարողություն:

«Պոեզիա»ն ու «Երաժշտություն»ը միայն քանդակների անվանումներ չեն, այլ հեղինակի աշխատանքների մեծ մասին ներհատուկ բնութագրումներ: Նրա ստեղծագործական աշխարհի հերոսները բնակվում են երկրից երկինք ձգվող տիրույթում՝ հաճախ մարդուց վերափոխվելով հրեշտակների: Վերջիններիս կերպավորումները գերակշռում են հատկապես վերջին տարիների ստեղծագործություններում:

Գիրքը հատուկ դերակատարություն ունի Յուրի Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ: Այն խորհրդանշում է ընդհանրապես հոգևոր մշակույթ, իմացական ժառանգություն: «Արվեստի վերադարձ» քանդակում հանդիսավորապես քայլող հրեշտակը գիրք ունի ձեռքին պարզաձև: Իսկ 2007-ին ստեղծված «Պատանեկություն» բրոնզաձուլված փոքրաչափ հորինվածքի հերոսուհին երազկոտ պարմանուհի է, որը կարծես արձանացել է Տերյանի բանաստեղծությունների հատորն ընթերցելիս:



Գրքի պաշտամունք ունեցող հայ քանդակագործը չէր կարող իր ստեղծագործական ճանապարհին չանդրադառնալ Մեսրոպ Մաշտոցի կերպարին: Առիթը ներկայացավ 2005 թվականին, երբ նշվում էր հայոց գրերի գյուտի 1600-ամյակը: Հատիչի նուրբ հարվածներով է կերտել Յուրի Հովհաննիսյանը մեծ Ուսուցչապետի կերպարը: Հայոց առաջին դպրոցի՝ Ամարասի

խորքին պատկերված Մաշտոցը սրբապսակ գլուխը հակել է մատյանի վրա և քարացել հայոց տառերի ստեղծման պահին: Եկեղեցու խորապատկերի վրա մեր այբուբենի առաջին ու վերջին տառերն են՝ հրեշտակաթեւ Այբ-ն ու Քե-ն: Ոգեղեն այս բարձրաքանդակը, որ քարե մանրանկար է հիշեցնում, այսօր իր մնայուն տեղն է գտել Ամարասում՝ ի տես վանքի այցելուների:

Շատ երկար կարելի է գրել մտավորական-քանդակագործի, նրա ներկայացրած շուրջ 3 տասնյակ քանդակներից յուրաքանչյուրի մասին: Կարևորն այն է, որ Յուրի

Հովհաննիսյանը գործող քանդակագործ է և շարունակում է նորանոր աշխատանքներ կերտել: Նա, միաժամանակ, մատաղ հոգիներ է կրթում 1996-ին Ստեփանակերտում իր իսկ հիմնած «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտում, որի ուսանողներին մանկավարժական գիտելիքներից զատ նաև իր անձնական հարուստ փորձն է փոխանցում:

Լևոն Լաճիկյան